

## «Նոր վարձագող միտումները քիմիայում» միջազգային գիտաժողովը



Սույն թվականի սեպտեմբերի 25-28-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Նոր գարգացող միտումները քիմիայում» միջազգային գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ կազմավորման 80-ամյակին և Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի կազմավորման 90-ամյակին:

Գիտաժողովը համախմբել էր շուրջ 350 մասնակից ԱՄԷ-ից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իռլանդիայից, Իտալիայից, Լեհաստանից, Կանադայից, Չինաստանից, Ղազախստանից, Միացյալ Թագավորությունից, Նիդեռլանդներից, Ռուսաստանից, Ֆինլանդիայից: Գիտաժողովի նպատակն էր միավորել քիմիայի տարբեր բնագավառների նշանավոր հետազոտողներին և խթանել արդյունավետ քննարկումներն ու հետագա համագործակցությունները:

Մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախում Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետևանքով զոհված-

ների հիշատակը:

«Առանձնահատուկ շնորհակալություն մեր հյուրերին, ովքեր կարողացան Հայաստան ժամանել աշխարհաբարձրական մասն բարդ իրավիճակում: Վստահ եղեք, որ դա իսկապես շատ կարևոր ու անհրաժեշտ է և՛ հայ ժողովրդի, և՛ հայ գիտնականների համար: Մի քանի օր առաջ ադրբեջանական բանակն իր ողջ ներուժով հարձակում գործեց Լեռնային Ղարաբաղի բնակչության՝ 120 հազար մարդկանց վրա, ովքեր ավելի քան 9 ամիս գտնվում էին շրջափակման և հումանիտար ճգնաժամի պայմաններում: Կան բազմաթիվ զոհեր, այդ թվում՝ կանայք և երեխաներ:

Ինչպես ցույց է տվել պատմությունը, մասն իրավիճակներում գիտնականները, մշակութային գործիչները և մանկավարժները եկեղեցու հետ միասին նշանակալի դեր են խաղացել ազգերին միավորելու և մարտահրավերներին դիմակայելու

գործում: Այս տեսանկյունից մեծ գիտաժողովները չափազանց կարևոր են»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարյանը: Ակադեմիկոս Սարյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ-ի պատմությունը և ձեռքբերումները:

Ներկաներին ողջունեցին և արդյունավետ աշխատանք մտադրեցին ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լևոն Թավադյանը, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, Ն. Ջելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի մետաղակոմպլեքս և նանոչափ կատալիզատորների լաբորատորիայի ղեկավար Վալենտին Ամանիկովը, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկանի տեղակալ Արմեն Գալստյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն Սահակ Գասպարյանը:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին ավելի քան 80 գիտական զեկու-

ցումներ՝ նվիրված սինթետիկ առաջընթացին, արհեստական բանականությանը և թվային դիզայնին քիմիայում, նոր քիմիական փոխակերպումներին, նոր նյութերի կամխատեսումներին, ֆոտոքիմիային, նոր տեսակների սինթեզին, գերմոլեկուլային փոխազդեցություններին քիմիայում, կատալիզի տեսությանը, նանոնյութերի հետազոտական տվյալներին և շատ այլ թեմաների:

«Նոր գարգացող միտումները քիմիայում» միջազգային գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը, Երևանի պետական համալսարանը և ՌԴ ԳԱ Ն. Ջելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



### ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված միջոցառումները հետաձգվում են



Հաշվի առնելով ստեղծված լարված և անկանխատեսելի իրավիճակը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան որոշում է ընդունել անորոշ ժամանակով հետաձգել ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված միջոցառումները:

### Օժանդակություն Արցախի տարհանված քաղաքացիներին

Հայաստանի Հանրապետություն տարհանված Արցախի քաղաքացիներին օժանդակելու նպատակով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից ձեռնարկվում են քայլեր գիտական, տեխնիկական, վարչատնտեսական և այլ ոլորտի մասնագետներին աշխատանքի տեղավորման, ինչպես նաև նրանց նյութատեխնիկական օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ: Նրանց ժամանակավոր կացարաններ են հատկացվել ԳԱԱ Արգականի գիտաժողովների տանը և Բյուրականի աստղադիտարանի հյուրատանը: Մեր բռնազաղթած հայրենակիցներին աջակցում են նաև ԳԱԱ ինստիտուտները:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

### ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի նոր ուսումնասիրությունը



Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողներն ուսումնասիրել են 180 բաբախիչների և մոտ 2000 արտագալակտիկ ռադիոաղբյուրների ֆարադեյի պտույտի տվյալները: Պարզվել է, որ Գալակտիկայի հյուսիսային կիսագնդի մագնիսական դաշտն ուղղված է դեպի Արեգակը, իսկ հարավային կիսագնդինը՝ հակառակը: Ենթադրվում է, որ Աղեղնավորի թևը հիմնականում գտնվում է Գալակտիկայի հարթությունից վերև, իսկ այդ հարթությունից ներքև ընկած տիրույթի մագնիսական դաշտը հարավային կիսագնդի Հալոյի դաշտն է:

«Ներկայացված աշխատանքը կատարվել է դեռևս 1980-ական թվականներին Բյուրականի աստղադիտարանում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի կողմից առաջարկված «Մեր Գալակտիկայի և գալակտիկաների մեծամասշտաբ մագնիսական դաշտերի ու-

սումնասիրություն» ծրագրի շրջանակներում: Մենք առաջարկել ենք «Մեր Գալակտիկայի մագնիսական դաշտի երկբարդադրիչ մոդելը», համաձայն որի՝ Գալակտիկայի պարուրած և թևերի մագնիսական դաշտի հարթ բաղադրիչն ընդգրկված է Հալոյի մեծամասշտաբ մագնիսական դաշտի ներսում: Ընդ որում պարուրած և թևերի մագնիսական դաշտերը տարածվում են թևերի ուղղությամբ, իսկ Հալոյի մագնիսական դաշտը՝ Գալակտիկայի հարթությունից մի քանի կիլոպարսեկ վերև ու ներքև և Գալակտիկայի դիֆերենցիալ պտույտի շնորհիվ ունի դեֆորմացված դիպոլային կառուցվածք, իսկ Հալոյի մագնիսական դաշտերը Գալակտիկայի հյուսիսային և հարավային կիսագնդերում ունեն իրար հակառակ ուղղություններ»,- պարզաբանեց գիտական խմբի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ռուբեն Անդրեասյանը:

Աշխատանքն ունի հիմնարար նշանակություն Գալակտիկայի մագնիսական դաշտի կառուցվածքի, նրա առաջացման և զարգացման պրոցեսները հասկանալու տեսանկյունից:

Աշխատանքը զեկուցվել է 2022 թվականի սեպտեմբերի 19-23-ը Բյուրականի աստղադիտարանում կայացած «Space Sciences and Technologies» միջազգային գիտաժողովի ժամանակ: Ստացված արդյունքները ներկայացվել են Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Չինաստանում անցկացված միջազգային գիտաժողովներում: Արդյունքներն ընդունվել են գիտական հանրության կողմից:

Աշխատանքում ընդգրկվել են Ռուբեն Անդրեասյանի ասպիրանտները:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

# «ԳԱՎ-ում ներկայացվեցին Սևանա լճին առնչվող ծրագրի արդյունքները»

Ս.թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Սևանա լճի վերաբերյալ հայ-գերմանական համատեղ եռամյա հետազոտության արդյունքները» աշխատաժողովը: Հանդիպման ժամանակ ներկայացվեցին «SEVAMOD2. Սևանա լճի համար գիտության վրա հիմնված կառավարման գործիքների ստեղծում» ծրագրի արդյունքները: Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի կրթության և գիտության դաշնային նախարարության կողմից և իրականացվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ ԳԱՎ էկոլոգամոնիտորինգի կենտրոնի, ՀՀ ԳԱՎ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և ՀՀ ԳԱՎ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ համագործակցությամբ:



ողջունեցին ՀՀ-ում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերը, ՀՀ ԳԱՎ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը, Գերմանիայի շրջակա միջավայրի հետազոտությունների Հեմիոլգի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի ղեկավար Կառստեն Ռինկեն:

Շեշտվեց ծրագրի կարևորությունը ՀՀ կառավարության կողմից որոշումների ընդունման գործընթացում՝ որոշումների գիտական հետազոտությունների վրա հիմնված լինելու տեսանկյունից:

Աշխատաժողովի ընթացքում ՀՀ ԳԱՎ գիտական կենտրոնների, Հեմիոլգի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի գիտաշխատողները, «Հիդրո-դերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4Sevan) ծրագրի ներկայացուցիչները համոզեցին եկան գեկուցումներով՝ ներկայացնելով Սևանա լճի քիմիական կազմի վերաբերյալ վերջին բացահայտումները, Սևանա լճում ֆիտոպլանկտոնի բնութագրումը, գոտայական կենդանի կյանքը, Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի մեխանիզմները, Սևանա լճի մոդելավորումը, լճի հիդրոքիմիական և իզոտոպային վերլուծությունները, EU4Sevan ծրագրի արդյունքները:

**ՀՀ ԳԱՎ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## «ԳԱՎ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի նոր հետազոտությունը»

ՀՀ ԳԱՎ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում հետազոտվել է միաբյուրեղական քիթեղից դիֆրակցված ռենտգենյան ճառագայթների վարքը՝ փոխուղղահայաց ձայնային ալիքների առկայությամբ: Ինչպես նշեց գիտական խմբի ղեկավար, ինստիտուտի տնօրեն Վահան Քոչարյանը, կատարված հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները կարող են օգտագործվել ռենտգենյան և սինքրոտրոնային փնջերի բնութագրերի արդյունավետ դեկավարման մեթոդների ու բարձր ճշգրտությամբ ռենտգենակուլոստիկական տարրերի մշակման համար, որոնք թույլ կտան իրականացնել ռենտգենյան փնջերի սպեկտրի, ինտենսիվության, ֆոկուսային հեռավորության և անկյունային դիրքի միաժամանակյա կառավարում՝ ապահովելով ժամանակային 0.1 մկվ կարգի լուծողունակություն: «Հետազոտության արդյունքները հետաքրքրություն են առաջացրել ՌԴ Կուրչատովյան ինստիտուտում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետազոտությունները շարունակելու և ռենտգենյան փնջերի պարամետրերի արագ կարգավորման սարք մշակելու վերաբերյալ՝ սինքրոտրոնային կայաններից մեկում տեղադրելու նպատակով»,- ասաց Վահան Քոչարյանը:

Հետազոտության արդյունքները տպագրվել են 2020 թ. «Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences)» և 2022 թ. «JETP Letters» հեղինակավոր գիտական հանդեսներում:

Կատարված հետազոտությունների արդյունքները գեկուցվել և ակտիվորեն քննարկվել են Իտալիայի միջուկային ֆիզիկայի ազգային ինստիտուտի «Ֆրասկատիի ազգային լաբորատորիաներ»-ի, Տոմսկի պոլիտեխնիկական համալսարանի, ՀՀ ԳԱՎ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի կողմից պարբերաբար կազմակերպվող միջազգային գիտաժողովներում և սեմինարներում:

**ՀՀ ԳԱՎ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ԳԻՏԱԿԱՆ ԵՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՃԵՆԿՐ

### Սմարթֆոնները խիստ վնասակար են աչքերի առողջության համար

Կորեացի գիտնականները հայտարարել են, որ սմարթֆոնի կամ պլանշետի էկրանի առջև 3 և ավելի ժամ անցկացնող երեխաների շրջանում առավել հաճախ է նկատվում չոր աչքի համախտանիշ, քան նրանց այն հասակակիցների շրջանում, ովքեր ժամանակակից գաջեթներ ավելի քիչ են օգտագործում: Չոր աչքի համախտանիշի ախտանշանները բուժելու համար երեխաները հետազոտության ընթացքում ստիպված են եղել մեկ ամսով հրաժարվել սմարթֆոնների գործածությունից: Չոր աչքի համախտանիշը (բավարար քանակությամբ արտասուք չարտադրվելու արդյունքում ի հայտ է գալիս կարմրություն, քոր և գերզգայունություն) ախտորոշվում է տարեցների շրջանում, սակայն վերջին ժամանակներում հիվանդությունը սկսել է «երիտասարդանալ», ինչի պատճառը, ըստ գիտնականների, սմարթֆոնների գործածությունն է: Գիտնականները իրենց ենթադրությունը հաստատելու համար իրականացրել են ուսումնասիրություն, որին մասնակցել է 7-12 տարեկան 916 երեխա: Նրանց տեսողությունը ստուգելու ընթացքում պարզվել է, որ երեխաների 6,6%-ի մոտ արդեն կա չոր աչքի համախտանիշ: Ընդ որում՝ գրեթե բոլոր երեխաներն էլ օրական 3,2 ժամ սմարթֆոն էին օգտագործում: Փորձագետները ծնողներին խորհուրդ են տալիս քնելուց առաջ գոնե մեկ ժամվա ընթացքում երեխաներին թույլ չտան, որ օգտվեն բջջային հեռախոսից, ինչպես նաև խստորեն հետևեն, որպեսզի օրվա ընթացքում սմարթֆոնով կամ պլանշետով ժամանցը չգերազանցի 2 ժամը:

### «Microsoft»-ը «Առաջիկա 10 տարում քաղցկեղի խնդիրը կլուծվի»

Ամերիկյան «Microsoft» տեխնոլոգիական ընկերությունը խստացել է առաջիկա տասնամյակում «լուծել քաղցկեղի խնդիրը»՝ օգտագործելով համակարգչային գիտության նորարարական տեխնոլոգիաները: Մասնագետները մտադիր են «կտրել» քաղցկեղային բջիջների կոդերն ու դրանք այնպես վերածրագրավորել, որ բջիջները կրկին առողջ լինեն: Հավակնոտ նախագիծն իրականություն դարձնելու նպատակով ընկերությունը կազմել է աշխարհի լավագույն կենսաբաններից, ծրագրավորողներից ու ինժեներներից բաղկացած թիմ, որի անդամներն աշխատանքի առաջին արդյունքներն առաջիկայում կփորձարկեն «Microsoft»-ի կողմից բացված առաջին վեբ լաբորատորիայում: Նախագիծն ներգրավված հետազոտողները փորձում են ստեղծել ԴՆԹ-ներից բաղկացած այնպիսի մոլեկուլյար համակարգ, որը կկարողանա ապրել մարդկային բջիջներում և քաղցկեղի առաջացման դեպքում անմիջապես կնկատի փոփոխությունը: Քաղցկեղային գոյացությունները հայտնաբերելու դեպքում համակարգը «կկտրի» քաղցկեղային բջիջների կոդերն ու դրանք կվերածրագրավորի:

«Այս նախագիծը, իհարկե, մեծ ժամանակ կպահանջի, բայց կարծում են, որ առավելագույնը 10 տարում հնարավոր է լուծել մեր առջև դրված խնդիրը»,- նշել է գիտական խմբի ղեկավար Էնդրյու Ֆիլիպսը:

### Տիեզերքի խոշորագույն քարտեզը լույս կսփռի մուգ էներգիայի վրա

Աստղագետների միջազգային խումբը կազմել է գալակտիկաների խոշորագույն եռաչափ քարտեզ, որը գիտնականներին հնարավորություն կտա ուսումնասիրելու տիեզերքում մութ նյութի (տիեզերքում նյութի (մատերիայի) այն ենթադրելի տեսակը, որը թույլ չի տալիս էլեկտրամագնիսական ճառագայթման թափանցում) և մութ էներգիայի (էներգիա, որի առկայությամբ մաթեմատիկական հատուկ մոդելում բացատրվում է տեսանելի տիեզերքի արագացմանը ընդլայնումը) բաշխվածությունը: Վերջին դիտումների արդյունքներով՝ մութ էներգիան և մութ նյութը կազմում են տեսանելի տիեզերքի ողջ զանգվածի և էներգիայի շուրջ 95%-ը: Քար-

տեզն ընդգրկում է շուրջ 1.2 միլիոն գալակտիկա ներառող մի ընդարձակ հատված: Գալակտիկաների խոշորագույն քարտեզի ստեղծումը հարյուրավոր գիտնականների՝ ավելի քան 10 տարի տևած համատեղ ջանքերի արդյունք է: Քարտեզը գիտնականներին հնարավորություն է տալիս հետևելու աստղային համակարգերի՝ երկուսից յոթ միլիարդ տարի առաջ տեղի ունեցած էվոլյուցիային, տիեզերքի ընդլայնման արագությանը և այդպիսով մոտավորապես որոշելու ժամանակակից տիեզերքում մութ նյութի և էներգիայի քանակային բնութագրերը:

«Եթե ժամանակին մութ էներգիան հանգեցրել է տիեզերքի ընդլայնմանը, ապա մեր կազմած քարտեզները ցույց են տալիս, որ այն դանդաղ է փոփոխվել, եթե ընդհանրապես փոփոխվել է: Վերջին 7 մլրդ տարվա ընթացքում մութ էներգիայի արժեքը փոխվել է ոչ ավելի, քան 20%-ով»,- նշել է հետազոտական խմբի անդամ, Պորտսմութի համալսարանի տիեզերագիտության և գրավիտացիայի ինստիտուտի ներկայացուցիչ Ֆլորիան Բյոթլերը:

### Անտարկտիդայի սառցաշերտից հսկա բեկոր է պոկվելու

Առաջիկա մի քանի ամիսների ընթացքում սպասվում է, որ Անտարկտիդայի սառցաշերտից հսկա բեկոր է պոկվելու, որը ներառվելու է աշխարհի ամենախոշոր բեկորների տասնյակում: Սառցե հսկան Լարսեն շելֆի կազմում է և ունի 5 հազար քառակուսի կիլոմետր մակերես:


«Այդ հսկան կարող է Լարսենի մասնատման և կործանման առաջին քայլը լինել: Լարսենն արդեն կտրվել է 1995 և 2002 թվականներին: Այդպիսի մեծության սառցաբեկորների առանձնացումը գալիսիտեն արագացնում է Անտարկտիդայի սառույցների անհետացման գործընթացը, ինչը հանգեցնում է համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացմանը»,- ասում է հետազոտող Դևիդ Վոանը և հավելում, որ ուսումնասիրողները հետևում են բոլոր փոփոխություններին:

Հետազոտողները նշում են նաև, որ տվյալ սառցաբեկորը զբաղեցնում է մույնչափ տարածք, որքան ԱՄՆ-ի Դելավար նահանգը: Հիշեցնենք, որ 2016 թ.-ի դեկտեմբերին տիեզերական հետազոտությունների NASA գործակալությունը ցուցադրել էր 100 մետր լայնությամբ և 500 մետր խորությամբ ճեղքի լուսանկարները:

### Թարթող ակնոց, որն աչքը պաշտպանում է լարվածությունից

Ճապոնական «Masunaga Optical» ընկերությունը ստեղծել է յուրահատուկ թարթող ակնոց, որը նախատեսված չէ տեսողությունը բարելավելու կամ մարդու տեսածը խոշորացնելու համար: Նոր ակնոցի հիմնական գործառնությունն աչքերը լարվածությունից ազատելն է: Հեղուկ բյուրեղներից պատրաստված ապակիների միջով պարբերաբար էլեկտրական իմպուլս է անցնում, որից հետո ապակիները մի փոքր «մշուշոտվում են»: Այդ գործընթացը տեղի է ունենում մի քանի վայրկյանը մեկ և տևում է 0.1-0.2 վայրկյան, ուստի մարդկային աչքն այն գրեթե չի նկատում: Գաղտնիքն այն է, որ հեղուկ բյուրեղների միջով անցնող էլեկտրական իմպուլսին մարդկային աչքերն արձագանքում են գրեթե այնպես, ինչպես թարթելուն: Այլ կերպ ասած, տեղի է ունենում աչքի թարթում՝ առանց թարթելու: Կամավոր փորձարկողներից գրեթե բոլորն էլ հաստատել են, որ աչքերի լարվածությունն օրվա ընթացքում նվազել է: Չնայած ակնոցն աչքի աշխատանքը զգալիորեն հեշտացնում է հատկապես համակարգչով աշխատելու ընթացքում, սակայն գիտնականները նշում են, որ այն, մինչև 100% -ով պաշտպանել աչքը: Առաջիկայում մոտ 150 ԱՄՆ դոլար արժողությամբ ակնոցը վաճառքի կհանվի:

**Պատրաստեց Կարողուհի Ջաբարյանը**



Հոկտեմբերի 1-ին՝ Արցախի համար համազգային աղոթքի օրը, Ա.Ս.Ս.Տ. Գարեգին Երկրորդ Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորանում Պատարագի սրբազան արարողությունից հետո կատարվեց աղոթքի հատուկ կարգ՝ ի գորակցություն Արցախի և արցախահայության: Արարողության ընթացքում Հայոց Հայրապետը Սուրբ Գեղարքով օրհնեց Հայաստան ու Արցախ աշխարհները և ներկա հավատացյալ ժողովրդին:



### Ի ԶՈՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՎ ԱՐՑԱԽԱՎԱՅՈՒՄՆԵՐԻՆ

Աղոթքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական ուղերձը հղեց համայն հայ ժողովրդին: «Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Ամսահման ցավով և խոր նտահոգությամբ են համակված բոլորիս հոգիները: Ծանր ու տագնապալի օրեր է ապրում ազգս հայոց: Այսօր, համախմբված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և հայոց եկեղեցիներում ի սպիռուս աշխարհի, աղոթք ենք բարձրացնում ի գորակցություն Արցախի մեր քույրերի ու եղբայրների, ովքեր, ենթարկվելով սոսկալի տառապանքների ու անմարդկային զրկանքների, բռնել են գաղթի ճանապարհը: Հայաթափվում է Արցախ աշխարհը, վերստին որբանում սրբազան հողը հայոց: Ազգային այս ողբերգության համդիման ցավով ենք անդրադառնում, որ Աղբերգանի գավթողական, ցեղասպանական գործողություններին աշխարհի անհամարժեք արծագանքը, Արցախի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների որդեգրած քաղաքականությունը և մեր ժողովրդի երկպառակությունը հանգեցրին Արցախի կորստյանը: Այսօր Հայաստանի Հանրապետությունն է նույն սպառնալիքի առջև. անթաքույց խոսվում է ինքնիշխանության և պետականության կորստի վտանգների մասին: Անվտանգային մարտահրավերները, տարածքային կորուստները, ակնհայտ հարկադրանքի ներքո խաղաղության հաստատման գործընթացում դրսևորվող շտապողականությունը, ինչպես

և հասարակության հետ իշխանության շփման կերպերն անվտանգության մթնոլորտ են ձևավորել և արդար ընդվզում առաջ բերել, ինչը ստեղծված բարդ կացության մեջ կարող է ցավալի զարգացումների առաջնորդել: Մեր հորդորն է պետական այրերին՝ նոր բաժանարար գծերով, անկշռադատ խոսքերով ու արտահայտություններով ատելություն չսերմանել, չմասնատել և չսկզբնառնել ժողովրդին: Առկա հիմնախնդիրներին արժանապատիվ հանգուցալուծում ապահովելու, հայրենիքը վտանգաշատ այս կացությունից դուրս բերելու համար հարկ է գործել սթափ, ճիշտ գնահատել աշխարհաքաղաքական իրողությունները և օրեցօր խորացող ճգնաժամի մեջ ի գործ դնել մեր ազգի փորձագիտական ողջ ներուժն ու փորձառությունը՝ չառաջնորդելու համար մեր երկիրը նոր կորուստների, հատկապես նկատի առնելով թշնամու հավակնություններն ու ռազմատենչ հռետորաբանությունը: Արցախյան արյունալի պատկերը վկայությունն է այն իրողության, որ անզուսպ են թշնամու զավթողական ձգտումները, և խտրություն չի դրվում միջոցների ընտրության հարցում: Մեր հորդորն ենք ուղղում նաև ազգային, կրոնական, հասարակական, քաղաքական կառույցներին՝ միավորելու մեր ժողովրդին ներկա ծանր մարտահրավերների համդիման և համախմբված գործելու՝ հանուն մեր երկրի ապագայի երաշխավորման: Սիրելի՛ ժողովուրդ, գոյաբանական սպառնալիքների

առջև հրամայական են մեր համազգային միաբանությունն ու համախմբվածությունը, քանզի միասնականության մեջ է մեր գորությունը, միասնականության մեջ է գալիք աղետը կամխելու ուղին: Արդ, ապրենք ու գործենք սիրով, մեր կորուստների ցավը ձեռքբերումներ դարձնելու բարձր գիտակցությամբ, մեր կամքն ու ոգին վերածենք ազգային կյանքի իրական արթնության և հայրենիքի ու ժողովրդի իրավունքների պաշտպանության միաբան ուժի, մեր կյանքով վկայենք ճշմարիտ նվիրումը հայրենիքին, ազգին և դարերով փայլած մեր անկախ պետականությանը: ...Արդարև, մեր հավատը, հույսը, հայրենասիրությունն ու ազգամիջոցները երբեք հնարավոր չէ սպանել: Այդ իսկ պատճառով հանուն Արցախի համազգային աղոթքը մեզ համար անհուսության աղոթք չէ, վշտի աղոթք չէ, տրտմության աղոթք չէ, այլ հույսի ու միախորության, վերհանունի ու հարության աղոթք է: Համազգային այս աղոթքը թող գոտեպնդի մեզ, համախմբի մեզ որպես Աստուծո սեփական ժողովուրդ, ազգի ու հայրենյաց հզորացման մեկ և միայն տեսիլքով: Այս պահը մեզ համար նաև առիթ է անդրադարձ կատարելու մեր կյանքի ընթացքին՝ հեռացնելու համար մեզանից հայրենադավ երևույթները, սրբագրելու սխալներն ու թերացումները, որպեսզի գործանանք որպես ազգ, պետություն ու եկեղեցի: Մեր հայրենյաց անգին մշխարը՝ Արցախ աշխարհը, մերն է ու մեր սրտում է, և Արցախի հայապատկան լինելու գիտակցությունը երբեք չի տկարանա սերունդների մեջ...»:

### ՄՏԵՐԻ ՀԱՐԹԱԿ



Հայոց Արցախ աշխարհը դատարկվեց: Ավելի քան հարյուր հազար մարդ բռնազրոյեց հազարամյակներով իր տուն և տեղ դարձած հայրենի Արցախից, իր գյուղերից ու քաղաքներից, իր Ամարասից ու Գանձասարից, քարե արձան դարձած իր տատ ու պապից, անտառներից ու գետերից, սարերից ու ձորերից: Դատարկվեց Հայոց հայրենիքի այդ տոհմիկ աշխարհը: Մարում է մի ինքնատիպ քաղաքակրթություն՝ արցախցու յուրահատուկ կերպարով, բարբառով, ծայրի հնչերանգով, ավանդույթներով ու ավանդություններով, համ ու հոտով, նիստուկացով, բարև - Աստուծու բարևով: Խորհրդային տարիներին վերջնականապես հայաթափված Նախիջևանին ավելանում է հայաթափված Արցախը: Քարտեզի վրա կոկորդիլոսի երախում հայտնված նրբագեղ ջրահարսի տեսք ունեցող Հայաստանի Հանրապետության բարակ մարմինը բարակում է աջից ու ձախից: Այսպես մինչև ո՞ր, այսպես դեպի ո՞ր, այսպես մինչև ե՞րբ... Լուրերը սև են, լուրերը մահ են գուժում՝ ամենուր սպանություններ, ձերբակալություններ, մահ, մահ, մահ... Ազգովի կանգնած ենք մեր հայ ժողովրդի հերթական ցեղասպանության առաջ, որ իրագործում է թշնամին: Արցախի շուրջ առձևատումն սկսվել էր դեռևս 20-րդ դարի սկզբից, ազատագրման հույսը անթեղված կրակի պես պահպանվեց խորհրդային իշխանության տարիներին, պայթեց 1988-ին, հաղթանակով սպակվեց 1994-ին, պարտությանը ավարտվեց 2020-ի 44-օրյա պատերազմում և ահա տնայնոր բռնազաղթ, որ պարտությունների պարտությունն է 2023-ի սեպտեմբերի 21-ից սկսած: Ի՞նչ կատարվեց: 2018-ի մայիսին, հեղափոխության կոչերով փողոցները փակելով, իշխանափոխությամբ իրենց դիրքային տեղը հռչակեցին ՔՊ-ականները: Ժողովուրդը ոչ թե հավատաց ու զննեց նրանց հետևից, այլ հիասթափված էր նախորդներից և պատրաստ էր ցանկացած փոփոխության, միայն թե նրանք հեռանան իշխանությունից: Նրանց հեռանալուց հետո միայն ակնհայտ դարձավ, որ իշխանությունը սին խոստումներով գավթել է քաղաքական թերուսը, այլ կերպ՝ Քաջ Նազարը՝ ծաղրածուն: Նա եկավ ու սկսեց

### ԱՅՍՊԵՍ ՄԻՆՉԵՎ ՈՒՐ...

հալածել պատերազմը հաղթած երեկվա հերոսներին, հեգնեց նրանց ու լցրեց բանտերը: Այսպես նրա առաջին ու հիմնական գործը եղավ բանակը **դեմոկրատացնելը**, այսինքն՝ և՛ պաշտպանական դիրքերի ամրությունը թուլացնելը, և՛ զինապահեստների տեղն ու պարունակությունը **քափանցիկ** դարձնելը: Հաջորդեց հոգին և հոգևորը պարտության մատնելու գործընթացը՝ աղանդների այս քայքայիչ գործունեության պայմաններում հարձակում Վեհափառ հայրապետի և հայ եկեղեցու դեմ, կրթական համակարգում ազգային արժեքների ոչնչացում, հայոց հոգեկերտվածքից չբխող կրթական չափորոշիչների պարտադրում, հայ հիմն և միջնադարյան գրականության օտարում դասագրքից, հայոց պատմության և եկեղեցու պատմության դերի ու նշանակության թուլացում: Սկսվեց երկակի խաղ ՌԴ-ի և Արևմուտքի միջև, և խաղը վարողն ովքեր էին, մշտապես և ամենուր մեղավորներ փնտրող վիճակի դերակատարից բացի, երեկվա պատմության դասատուն, ով նշանակվեց պաշտպանության մախարար, նախկինում այլ երկրի գործակալ լինելու մեջ կասկածվողը, որ դարձավ արտագործնախարար, ազգային արժեքները քանահորդները, ովքեր աշխատանքի անցան որպես կրթության, մշակույթի և էլի մի քանի այլ բաների մախարար՝ ամենկին չհիշելով, որ հարյուր տարի առաջ այդ պաշտոնը զբաղեցրել է մեծագոր Նիկոլ Աղբալյանը: Աժ-ն լցվեց ՔՊ-ական յուրայիններով, որոնք պատահական, երբեմն շա՛տ պատահական մարդիկ են: Գիշտ են նկատել սրամիտ մարդիկ, որ Աժ-ն ավելի շատ թողնում է մանկապարտեզի տպավորություն: Նրանց նմանները երեկ չէ առաջին օրը եռանդուն ՀՀԵ-ական էին, երեկ՝ Հանրապետական, այսօր ՔՊ-ական են, վաղը՝ ինչ պատահի, որովհետև սկզբունք չունեն, իսկ ծառայամտության համար բարձր վճարվում են: Ահա այս պատկառելի պատահականություններն էլ մեզ տարան պարտության: Կորցրի՞մք ռազմական ուժը և դիվանագիտական խելքը: Այդ ո՞վ չգիտեր, որ Ռուսաստանը Լե-նինից ու Ստալինից սկսած մինչև Պուտինի թուրքի քաղաքական շահերի յուրայիններով, որոնք պատահական ամբողջականությունը ճանաչելու վերաբերյալ Պրահայում ստորագրված չարաբաստիկ փաստաթուղթը ժամանակավորեց էր և կատարյալ անհեռատեսության հետևանք: Կարիք կա՞ր ՌԴ նախագահին մեր դեմ ավելի տրամադրելու համար ԱՄՆ-ի 85-հոգիանոց զորախմբի հետ գորավարժություն անցկացնել, որ նման էր երեխաների կռիվ-կռիվ խաղին: Եվ դա էլ քիչ էր՝ որպես ծաղկեփունջ տիկնոջը գործուղել Ուկրաինա, որպեսզի սեղմի ՌԴ-ի դեմ պատերազմող Ուկրաինայի նախագահ Չելսեյնսկու ձեռքը և խաղալիքը ձեռքին՝ այցելի քաղաքական շահարկումների քաղաք դարձած Բուչա: Պե՞տք էր այդպես ցուցադրաբար միանալ Հռոմի ստատուտի տարփողմանն ու ընդունմանը, հապա ճկուն խելքն ու դիվանագիտություն կոչվածն ինչի՞ համար են, երբ երկիրը կանգնած է կործանարար ողբերգության առջև: Կարչախմբի քաղաքական կուրությունը մի ամբողջ ժողովր-

դի հասցրեց շարունակվող հերթական դառը պարտության: Էլ ի՞նչ հպարտ հայ, էլ ի՞նչ հերոսություն... Մեր այս անկալ վիճակը տգետ քաղաքականության հետևանք է: Աշխարհն ընդունում է ուժեղներին ու հաղթողներին և նրանց շահերի հետ հաշվի է նստում, իսկ թուլերին ու պարտվողներին խղճում է հունանիտար օգնության աստիճանի: Հետո կարտահանեն քո մի բուռ ժողովրդին, որովհետև այդքանին անգամ չես կարողանում պահել, էլ ո՞ր մնաց պահպանել: Այնպես որ մեր սխալները մեր ներսում պիտի որոնենք և ոչ թե Ռուսաստանի վրա բարդենք, բայց օգնություն հայցենք նրա խաղաղապահներից: ՀՀ վարչապետն անկարող է իր ժողովրդի շահերը պաշտպանել, այդ իսկ պատճառով պետք է հեռանա և ենթարկվի պատասխանատվության: Պարտությունը քայքայիչ թույն է, որ ջլատում է ժողովրդի ամբողջությունը, այն աստիճանի խորացնում կասկածանքությունը, որ մեկը մյուսի համոզեց կորցնում է քաղաքական վստահությունը, մեկը մյուսին համարում քաղաքական դավաճան: Այդպես, որովհետև **Իսկանդեր** զինատեսակի հրթիռի մարտազխիկը չկա, որովհետև ՄՈՒ կործանիչները չեն թռչում, թշնամին, ում հասցեին միայն հեզանքով էինք խոսում, տոնում է իր հաղթանակը. բռնազրավում է մեր պաշտպանության բանակի տանկերը, ամբողջ սպառազորությունը, ձերբակալում բոլոր երևելիներին և գաղթական դարձնում հայության մի ամբողջ տոհմիկ հատվածի, վերանում է ինքնավարություն, հանրապետություն հռչակված մի ամբողջ պետական համակարգ՝ Արցախի Հանրապետություն: Եվ այս պարտությունը մեր ծանր ամոթն է, ո՞ր մնաց իր տեղը, ինքը իր գլուխը կորցրած հպարտ հայոց: Մինչդեռ իրադրությունների այս ծանր զարգացումների ընթացքում պետք էր ձևավորել **մահապարտների խումբ** և անցնել պարտիզանական պատերազմի: Ո՞ւմ է պետք նսեմորեն փախցրած կյանքը, երբ այն Հայրենիք արժե: Իր հայրենի հող ու ջրից հեռացած վերջին արցախցու նման կանգնել են աշխարհի խաչմերուկներում, նայում են աջ, նայում են ձախ ու մտածում են՝ 1915-ին դատարկվեց Վանը, դատարկվեցին Կարինը, Երզնկան, ամբողջ Արևմտյան Հայաստանը, հետո ընկավ Կարսը, մեր աջից առաջ՝ Հաղորթը, թշնամին մտավ Հուշի, հիմա կորցրի՞մք ամբողջ Արցախը, որովհետև Հայրենիքի պատիվը կորցրած մեր պաշտոնյաները թշնամու ականջին աշխարհով մեկ փսփսացին՝ Հուշին հայկական քաղաք չէ, Գարեգին Նժդեհը Ֆաշիստ է: Այս ո՞րտեղից եկան այս ապագային պատուհասները, այսպես մինչև ո՞ր, այսպես մինչև ե՞րբ... Արթնացի՛ր Նաիրյան ոգի, արթնացի՛ր Հայկ Նահապետ... Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը



Ա.թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանը: Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1961 թ. Ախալքալաք քաղաքում: 1977-1982 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1982-1985 թթ. եղել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական, 2002 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: Աշոտ Մելքոնյանը 1986 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: Եղել է գիտաշխատող, գիտական քարտուղար, փոխտնօրեն, իսկ 2002 թվականից՝ ինստիտուտի տնօրեն: 2004 թ. նա ստացել է պրոֆեսորի կոչում, 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2014 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նա հեղինակ է 474 գիտական աշխատության, այդ թվում՝ 19 գրքերի, որոնք լույս են տեսել 10 լեզուներով աշխարհի 15 երկրներում: Ակադեմիկոս Մելքոնյանն արժանացել է «Սովսես Խորենացի», «Վաչագան Բարեպաշտ», ԵՊՀ ոսկե մեդալների և տասնյակ այլ պարգևների: Աշոտ Մելքոնյանը նշեց, որ հայոց պատմության նոր ակադեմիական հրատարակության 8 գրքերից 6-ն անվճար տրամադրվել են գրադարաններին, գործնասերին և դպրոցներին: «Ինչպես բազմաաշխատողական, այնպես էլ մնացած աշխատողներին ստեղծման հարցում առաջնորդվել ենք բացառապես ամաչառ պատմություն գրելու հրամայականով՝ քաղաքական կոնյունկտուրայից զերծ», - ասաց Աշոտ Մելքոնյանը: Որպես կարևոր ձեռքբերում՝ նա շեշտեց ԱՄՆ սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի դերակատարությունը: «Ի պատասխան մեր նամակի՝ ԱՄՆ կոնգրեսը հայտնել էր, որ ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ ինստիտուտի դիմումը որոշակի նշանակություն է ունեցել կոնգրեսականների ճիշտ կողմնորոշվելու խնդրում», - ասաց Աշոտ Մելքոնյանը: **ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Վիկտոր Կատվայանը



Ս.թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Վիկտոր Լիպարիտի Կատվայանը: Վիկտոր Կատվայանը ծնվել է 1961 թվականին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: 1984 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1984-1987 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում, իսկ 1987 թ. աշխատանքի է անցել ինստիտուտում: 1991 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1993 թ. դասախոսում է Գավառի պետական համալսարանում: 1998-2004 թթ. եղել է Մույն համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկավար, 2004-2012 թթ.՝ բանասիրական ֆակուլտետի ղեկավար: 2011 թ. դասավանդում է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: 2012 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենն է: 2017 թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Վիկտոր Կատվայանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են բարբառագիտությանը, հայոց լեզվի պատմությանը, ժամանակակից հայերենին, ընդհանուր լեզվաբանությանը, բանարանագրությանը, արևմտահայերենի և արդի լեզվաբանականության խնդիրներին: Նա հեղինակ է 14 մենագրությունների և շուրջ 90 հոդվածների: Վիկտոր Կատվայանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գործունեությունը: Նա նշեց, որ նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում՝ հետազոտություններ ծավալելու հոգեվեզվաբանության, նյարդալեզվաբանության ուղղություններով: Վերջերս բացված փորձառական հնչյունաբանության լաբորատորիան նորագույն տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություններով լավ հեռանկարներ է բացում հայերենի բոլոր կարգի դրսևորումների փորձառական հետազոտությունների համար: Կարևորվում են հայերենագիտության ոլորտում ինստիտուտի ձեռքբերումները միջազգայնացնելու նպատակով օտարալեզու հրատարակումների ավելացումը, հասարակության մեջ լեզվական ճիշտ պատկերացումների ձևավորումը, երիտասարդ գիտնականների պատրաստման ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը: **ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Հերիքնազ Որսկանյանը




Մույն թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց Հերիքնազ Վանիկի Որսկանյանը: Հերիքնազ Որսկանյանը ծնվել է 1970 թ.-ին: 1994 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը՝ հայոց լեզու և գրականության մասնագիտացմամբ: 1994-1997 թթ.-ին եղել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ: 2006 թ.-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Հերիքնազ Որսկանյանը 1993 թ.-ից աշխատել է Վաղարշապատի թիվ 9 և թիվ 7 դպրոցներում: Եղել է Վաղարշապատի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրենի տեղակալը ուսումնական աշխատանքների գծով: 1998 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 2013 թ.-ից ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, նաև գիտքարտուղարը: 2015 թ.-ից զբաղեցրել է ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը: 2023 թ.-ից ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատարն է: **ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Մերի Մանուչարյանը



Մույն թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց Մերի Մանուչարյանը: Մերի Մանուչարյանը ծնվել է 1982 թ.-ին: 2003 թվականին ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսագիտական ֆակուլտետը, 2005 թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2005-2009 թթ.-ին եղել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ: 2014 թ.-ին ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2019 թ.-ին՝ թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման ՀՀ ԲՈԿ-ի թույլատրություն, իսկ 2020 թ.-ին՝ դոցենտի կոչում: 2005-2006 թթ.-ին աշխատել է «Նաիրի ինչուրան» ապահովագրական ՍՊԸ-ում որպես տնտեսագետ: 2011 թ.-ից աշխատում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ դասախոս: 2015 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատողից մինչև ՏՆԵՏ-ության իրական հատվածի հիմնախնդիրների բաժնի վարիչ: 2018 թ.-ից ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և խմբագրական խորհրդի անդամ է, իսկ 2022 թ.-ից՝ նաև գիտության գծով փոխտնօրեն: 2018 թ.-ին եղել է «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ոլորտում (TOPAS) Էրազմուս + ԳԳԳ» ծրագրի կատարող: Մերի Մանուչարյանի հետազոտության ոլորտներն են՝ աշխատանքի էկոնոմիկա, ագրարային էկոնոմիկա, ջրային տնտեսության էկոնոմիկա, ապահովագրություն, նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում, վարկավորման դերը ՀՀ ագրարային ոլորտում, թվային տնտեսության դերը ՀՀ ագրոպարենային համակարգում, պարենային ապահովության հիմնախնդիրները ՀՀ-ում, կանաչ տնտեսություն և կայուն զարգացում: Մերի Մանուչարյանը հեղինակ է 3 մենագրության, 3 մեթոդական ցուցումների և 80 գիտական հոդվածների, որոնցից 49-ը՝ միջազգային գրախոսվող ամսագրերում, 2-ը՝ «Scopus» և «Web of Science» գիտատեղեկատվական շտեմարաններում: Դասախոսություններով հանդես է եկել եվրոպական մի շարք համալսարաններում: Մերի Մանուչարյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ 2023-2028 թթ.-ի զարգացման ծրագիրը: Նա նշեց, որ ինստիտուտի նպատակային և փորձային խնդիրներն են լինելու կարգային քաղաքականության կատարելագործումը, մրցունակ ծրագրերի իրագործումը, համագործակցության ընդլայնումը, ճանաչելիության ապահովումը, գիտական վարկանիշի բարձրացումը, գիտական արդյունքների միջազգայնացումը, OJS համակարգի ներդրումը և նոր գիտական ուղղություններով հետազոտությունների ծավալումը: **ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ



ջան մտած թուրքերը, նրա հետ ժամանակավոր համաձայնագիր կնքած ԱԴԳ-ն, Անտանտը ներկայացնող անգլիական ռազմական առաքելությունը, Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որի անկապտելի մաս է իրեն հայտարարել ԼԴ-ն Լիազոր ներկայացուցիչների իններորդ համագումարում: Եվ այսպես՝ 1) Արցախին հավակնող ԱԴԳ-ն լքել է պատմությունը առանց նրա վրա սուվերեն իշխանության, 2) զինված պայքարով ԱԴԳ-ի իշխանությունը մերժած ԼԴ-ն 1920 թ. ապրիլի 28-ին իրեն հայտարարել է ՀՀ անկապտելի մաս:

Մյուս Ադրբեջանը Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր. ԽՍՀ), 1920 թ. հիմնել են Խորհրդային Ռուսաստանի (ՌՍՖՍՀ) գործերը, որ ապրիլի 28-ին մտել են Բաքու, տապալել թուրքական

խանապետությունից, ապա օրակարգից հանել 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը, որով ճանաչվում էր ԽՍՀՄ-ից դուրս անկախ պետություն հիմնելու ԼԴԻՄ-ի իրավունքը: Հրաժարվելով ապօրինի Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից՝ մերօրյա Ադր. Հ-ն դարձավ մեկ այլ ապօրինի կազմավորման՝ թուրքերի կողմից հիմնված, Ազգերի լիգայի կողմից մերժված պատմությունն առանց Արցախի լքած կազմավորման իրավահաջորդը: Սա միակ հիմքը չէ փաստարկելու համար, որ Արցախը չի պատկանում Ադր. Հ-ին: Բանն այն է, որ ԱԴԳ-ն դադարել է գոյություն ունենալ առանց փաստորեն հաստատված կամ ճանաչված սահմանների, նրա իրավահաջորդը դարձած մերօրյա Ադր.Հ-ն որևէ որոշակի տարածք իր համար չէր կարող հռչակել (չէր կարող նշել նաև Ադր. ԽՍՀ-ի տարածքները, որոնցում Արցախն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԿԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՉԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԱԳՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Փաստաթղթերում արձանագրված լույսի պես պարզ այդ ճշմարտությունը և նրա իրավական հետևանքները տեսանելի չեն հանուրին, քանի որ դրանք փակված են մնացել հիմնախնդրի իրավական փաթեթում, որն այդպես էլ ԵԱՀԿ-ն չի բացել: Այն բացող ցանկացած հետազոտող նախ բախվելու է խնդիր խճճող այն փաստին, որ Ադրբեջանական Հանրապետություն «գլխարկի» տակ երեք տարբեր Ադրբեջան կա, և պարզ չէ, թե Բաքուն որ մեկի անունից է խոսում: Մեր խնդիրն է ստորև ցույց տալ, որ Լեռնային Ղարաբաղը (ԼԴ) դրանցից ոչ մեկին չի պատկանում: Առաջինը՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ), ստեղծել է Օսմանյան կայսրությունը, որի գործերը 1918 թ. սեպտեմբերին մտել են Բաքու, տապալել օրինական իշխանությունը և կայսրության սահմաններից դուրս հիմնել նոր թուրքական պետություն (1976 թ. Թուրքիան կրկնեց իր այդ փորձը՝ իր սահմաններից դուրս հիմնելով Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը): ԱԴՀ-ն օրինաբար՝ ինքնորոշման ակտով չի կայացել: Ազգերի լիգան 1920 թ. դեկտեմբերին մերժել է Լիգա ընդունվելու ԱԴՀ-ի հայցը՝ նրանում տեսնելով Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի անունը սեփականած, Լիգայի անդամ-պետություններից ոչ մեկի կողմից դե յուրե չճանաչված, իր կողմից չվերահսկվող տարածքներին (նաև Արցախին) հավակնող ապօրինի կազմավորում: Նույն՝ 1918-1920 թթ. Արցախն ուներ օրինական իշխանություն: Դա ԼԴ Լիազոր ներկայացուցիչների Համագումարն էր (ԼԴ ԼՆՀ) և նրա ձևավորած գործադիր մարմինը՝ ժողովրդական Կառավարությունը: Նման լեգիտիմ մեկ այլ ազգային մարմին տարածաշրջանում չի եղել: ԼԴ ԼՆՀ-ի՝ որպես դե ֆակտո անկախ Արցախի օրինական իշխանության հետ հարաբերվել են տարածաշր-

ջան մտած թուրքերը, նրա հետ ժամանակավոր համաձայնագիր կնքած ԱԴԳ-ն, Անտանտը ներկայացնող անգլիական ռազմական առաքելությունը, Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որի անկապտելի մաս է իրեն հայտարարել ԼԴ-ն Լիազոր ներկայացուցիչների իններորդ համագումարում: Եվ այսպես՝ 1) Արցախին հավակնող ԱԴԳ-ն լքել է պատմությունը առանց նրա վրա սուվերեն իշխանության, 2) զինված պայքարով ԱԴԳ-ի իշխանությունը մերժած ԼԴ-ն 1920 թ. ապրիլի 28-ին իրեն հայտարարել է ՀՀ անկապտելի մաս:


Մյուս Ադրբեջանը Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր. ԽՍՀ), 1920 թ. հիմնել են Խորհրդային Ռուսաստանի (ՌՍՖՍՀ) գործերը, որ ապրիլի 28-ին մտել են Բաքու, տապալել թուրքական

ոչ միակ հիմքը չէ փաստարկելու համար, որ Արցախը չի պատկանում Ադր. Հ-ին: Բանն այն է, որ ԱԴԳ-ն դադարել է գոյություն ունենալ առանց փաստորեն հաստատված կամ ճանաչված սահմանների, նրա իրավահաջորդը դարձած մերօրյա Ադր.Հ-ն որևէ որոշակի տարածք իր համար չէր կարող հռչակել (չէր կարող նշել նաև Ադր. ԽՍՀ-ի տարածքները, որոնցում Արցախն

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԱՄՆ-Ը ՊԵՏ-Ը Է ՊԱՏՕՒԻ ԱՅԴ ԳԻԿՏԱՏՈՐԻՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆԻ ՀԱՅԵՐԻՆ...



Ամերիկացի աշխարհահռչակ դերասան Մորգան Ֆրիմանն անդրադարձել է Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Գերասանը նշել է, որ իր համար տարօրինակ էր աշխարհի լռությունը մի ամբողջ ազգի ողբերգության նկատմամբ...

Ֆրիմանն իր խոսքում մասնավորապես ասել է. «Հավանաբար ձեզանից շատերը տեղյակ էլ չեն, թե որտեղ է գտնվում Արցախը, ու ինչ է այնտեղ կատարվել: 100 հազարից ավել մարդիկ ստիպված եղան լքել իրենց տները՝ փրկելով իրենց կյանքը: Իսկ ի՞նչն էր պատճառը, կհարցնեք դուք... Արկածախնդիր մի դիկտատոր՝ Իլիամ Ալիև անունով, համարեց, որ նույնիսկ տասնյակ հազարավոր զոհերի գնով արժե ևս մի քանի տարի մնալ իշխանության: Ինձ ճանաչողները գիտեն, որ ես հեռու եմ քաղաքականությունից, բայց շատ մոտ եմ պատմությանը ու կարող եմ վստահ ասել, որ Արցախում հազարամյակներ շարունակ ապրել են հայեր, իսկ հիմա նրանք ենթարկվեցին տեղահանման ու կոտորածի: Այդ ամենը կատարվեց, որովհետև...

Բոլորը, ներառյալ հայերի դաշնակիցները, փակեցին իրենց աչքերը՝ լայն բացելով ստամոքսը: Դա կատարվեց, քանի որ մենք հերթական անգամ մոռացության տվեցինք մարդկային ճակատագրերը՝ տուրք տալով բացառապես սեփական շահերին: Ես կոչ եմ անում ամերիկյան իշխանություններին հստակ դատապարտել Ադրբեջանին՝ նրա վարած հանցավոր ռազմական գործողությունների համար ու պատասխանատվության ենթարկել...

Մինչև չլինեն կոնկրետ գործողություններ, Ադրբեջանը կանգ չի առնի: Ես համոզված եմ, որ մենք ունենք այնքան ուժ, որ մի կողմ դնելով քաղաքական հարցերը՝ վերջ տանք կոտորածներին...

ՍԻՐՏՍ ՑԱՎՈՒՄ Է ԱՐՑԱՒԻ ՀԱՄԱՐ...

Ռուս նշանավոր երգահան ու երգիչ Իգոր Կրուտոյը խոսել է Ադրբեջանի, Ալիևի հանցակազմի ու Արցախի ապագայի մասին...

Վերջերս նա ասել է, որ ինքն անձնական մեծ ցավ է ապրում Արցախի համար. «Ես բազում ընկերներ ունեմ, ովքեր ազգությամբ հայեր են ու ծնունդով Արցախից: Տեղյակ եմ նաև այդ հերոսական ժողովրդի պատմությանը: Գիտեմ, որ հազարավոր տարիներ այդ հողում ապրել են հայերը, ու Արցախն այն վայրն էր, որտեղ միշտ հայն ապրել է, ու նրանք երբեք չեն ծուլվել այլ ժողովուրդների հետ, այդ թվում՝ թուրքերի ու արաբների: Ասել կուզեմ, որ եթե զտարյուն հայեր եք փնտրում, ապա նրանց կարող էիք գտնել Արցախում...

Հարազատ հայ ժողովրդի ցավը իմ անձնականն են համարում: Դատապարտում եմ Ադրբեջանի հանցավոր քայլերը, հարձակումն ու հայ ժողովրդի էթնիկ զտումը: Պարոն Ալիևին խորհուրդ կտամ լավ ուսումնասիրել պատմությունը, ու գուցե այդքան նա հասկանա, որ հայերին, առավել ևս արցախահայերին հնարավոր չէ հաղթել: Այո, հիմա Ադրբեջանը հաղթել է մարտը, բայց ոչ ճակատամարտը: Ես վստահ եմ, որ պատմական արդարությունը վերականգնվելու է...»:



ԽՈՐԻՄԱՍ ՄՏՔԵՐ

- Հաղթողը շատ ընկերներ ունի, սակայն պարտվածի ընկերներն են իրական: ՍԱՔԻԱՎԵԼԻ
- \*\*\*
- Կարելի է հիմարացնել ժողովրդի մի մասին մշտապես, կարելի է հիմարացնել ամբողջ ժողովրդին մի որոշ ժամանակ, սակայն անհմար է հիմարացնել ամբողջ ժողովրդին մշտապես: Ա. ԼԻՔՐՈՆ
- \*\*\*
- Ով կերտում է ապագան, իրավունք ունի լինելու անցյալի դատավորը: Ֆ.ՆԻՑԵ
- \*\*\*
- Վատ օրենքներով և լավ չինովնիկներով կառավարումը դեռևս հնարավոր է, բայց վատ չինովնիկներով ոչ մի օրենք էլ չի օգնի: Օ. ԲԻՍՄԱՐԿ
- \*\*\*
- Թույլ երբեք չի ներում: Ներելը ուժեղի հատկանիշ է: Է.ՌԵՍՄԱՐԿ
- \*\*\*
- Երբ ջունգլիներում չկա վագր, թագավոր է դառնում կապիկը: ՍԱՍ ՑՁԵՂՈՒՆ
- \*\*\*
- Այն ժողովուրդը, որի վերնախավը կաշառակեր է, ինքնակոչ և հայրենադավ, ոչ թե զոհ է, այլ հանցակից: Չ. ՕՐՈՒԵԼ
- \*\*\*
- Անցյալը մոռացողին պատժում է ապագան... Գ. ՆՄԴԵՂ

# ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԸ

## Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի 150-ամյակի առթիվ



Հայ պատմագիտության ակադեմիկոսներից մեկը, Կոմիտասի համալսարանի պատմա-գիտական ինստիտուտի պրոֆեսոր, 1906-1907 թթ. Ներսիսյան դպրոցում, 1911-1913 թթ. Բաբելոնի ժողովրդական համալսարանում և 1915-1919 թթ. առևտրական դպրոցում: 1919-ի դեկտեմբերին հրավիրվել է Երևանի պետական համալսարան և նշանակվել պատմա-լեզվագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1921-1922 թթ.՝ ռեկտոր, 1921-1923-ին՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետների դեկան, 1921-1925-ին՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925-1931-ին՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հայ պատմագիտության ակադեմիկոսներից մեկը, Կոմիտասի համալսարանի պատմա-գիտական ինստիտուտի պրոֆեսոր, 1906-1907 թթ. Ներսիսյան դպրոցում, 1911-1913 թթ. Բաբելոնի ժողովրդական համալսարանում և 1915-1919 թթ. առևտրական դպրոցում: 1919-ի դեկտեմբերին հրավիրվել է Երևանի պետական համալսարան և նշանակվել պատմա-լեզվագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1921-1922 թթ.՝ ռեկտոր, 1921-1923-ին՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետների դեկան, 1921-1925-ին՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925-1931-ին՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Գևորգյան ճեմարանում, 1905-1907 թթ.՝ Թիֆլիսի առաջին և երկրորդ արական գիմնազիաներում, 1906-1907 թթ.՝ Ներսիսյան դպրոցում, 1911-1913 թթ.՝ Բաբելոնի ժողովրդական համալսարանում և 1915-1919 թթ.՝ առևտրական դպրոցում: 1919-ի դեկտեմբերին հրավիրվել է Երևանի պետական համալսարան և նշանակվել պատմա-լեզվագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1921-1922 թթ.՝ ռեկտոր, 1921-1923-ին՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետների դեկան, 1921-1925-ին՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925-1931-ին՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

1925 թ. Հ. Մանանդյանը ընտրվել է Գիտության և արվեստի ինստիտուտի անդամ, 1930-ին՝ հաստատվել ՀՀ գիտությունների ինստիտուտի առաջին կազմում: 1935 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1939 թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 1943 թ. երբ կազմավորվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, Հ. Մանանդյանը ընտրվեց նրա հիմնադիր անդամների կազմում: Գիտական արգասաբեր գործունեության համար պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ակադեմիկոսի պատմաբանը հեղինակ է ավելի քան 150 աշխատությունների (հայերեն, ռուսերեն, գերմաներեն), որոնք նվիրված են հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմությանը և բանասիրությանը, Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրությանը, առևտրական ճանապարհների ու ռազմական արշավանքների երթուղիների ուսումնասիրությանը, չափագիտությանը, վիճաբանությանը և այլն:

Հ. Մանանդյանը զբաղվել է հունական իմաստասիրական երկերի հայերեն թարգմանությունների, հայոց մատենագիտության, հունաբան դպրոցի գործունեության, առանձին երկերի, հատկապես Գավթի Անիաթի իմաստասիրական ժառանգության ուսումնասիրությանը: Այս բնագավառում կատարած նրա աշխատանքների հանրագումարն էր «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928 թ.) մենագրությունը:

Մեծ արժեք են ներկայացնում Հայաստանում հայտնաբերված հունարեն վիճաբան արձանագրությունների վերծանմանն ու ուսումնասիրմանը նվիրված նրա աշխատությունները՝ «Արմավիրի հունարեն արձանագրությունները Մոր լուսաբանությանը» (1946 թ.), «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (1946 թ.) և այլն:

Հ. Մանանդյանը խորհրդահայ պատմագիտության հիմնադիրներից էր: Նրա առաջին հետազոտություններն այս բնագավառում նվիրված են հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, առևտրային հարաբերությունների, մասնավորապես շինականների դրության, արքունի հարկերի, հողատիրության ձևերի, առևտրի և քաղաքների ուսումնասիրությանը: «Օ торговле в городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э.-XV в. н.э.)» (1930 թ.) մենագրության մեջ գիտականորեն ուսումնասիրել է Հայաստանի քաղաքների պատմությունը, խաղաղած դերը համաշխարհային առևտրի մեջ: «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների և մարգ-

րապետյան վարժարանում, ապա փայլուն առաջադիմությամբ՝ Թիֆլիսի առաջին դասական գիմնազիայում: 1893-1897 թթ. ուսանել է Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի համալսարաններում և մասնագիտացել պատմության, բանասիրության, լեզվաբանության, փիլիսոփայության, արևելագիտության մեջ՝ աշակերտելով նշանավոր գիտնականներ Բ. Դելբրյուկին, Գ. Զյոլերմանին, Յո. Շրյոդերին և այլոց: 1897-ին Ենայի համալսարանում պաշտպանել է «Պատմություն Ադուանից» աշխատության հեղինակի հարցի շուրջը՝ ավարտական թեզը՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1898-ին ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը և ստացել հայ-պարսկական բանասիրության թեկնածուի աստիճան կարգի դիպլոմ: Այնուհետև հայկական ձեռագիր մատյանների ուսումնասիրությամբ է զբաղվել Լոնդոնի, Փարիզի, Վենետիկի համալսարաններում:

1899 թ. Գևորգյան ճեմարանի հրավերով Հ. Մանանդյանը գալիս է Հայաստան և նվիրվում գիտամանկավարժական գործունեությանը՝ դասավանդելով հին հունարեն, գերմաներեն, հունական փիլիսոփայություն և գրականություն: 1901-1903 թթ. պրոֆ. Ֆրանց Ֆինկի և Եզնիկ Գյանջեջյանի հետ երիտասարդ հայագետը մասնաձեռնում է Աբգար Հովհաննիսյանի Երևանյան օժանդակությամբ լույս տեսնող «Հանդես հայագիտության» գիտական պարբերականի հայերեն և գերմաներեն լեզուներով հրատարակումը և դառնում նրա խմբագիրներից մեկը: 1902 թ. հունվարից նշանակվում է «Արարատ» ամսագրի խմբագրի տեղակալ:

Էջմիածնում մտերմանում է ճեմարանում դասավանդող Կոմիտասի և Հրաչյա Աճառյանի հետ: Վերջինիս հետ ուսումնասիրում է Էջմիածնի մատենադարանի իմաստասիրական և պատմագիտական ձեռագրերը, ծրագրում է աշխատություն գրել հայ մշակույթի մասին: Լայն հասարակական և իրապարակախոսական գործունեություն է ծավալում, աշխատակցում է օրաթերթերին, 1906 թ. մարտի 5-ից դառնում է հրատարակիչ Գ. Մելիք-Կարազոյցյանի «Արշալույս» հայկական օրաթերթի ժամանակավոր խմբագիրը: 1900-ականներին աշխատակցել է նաև պարբերական մամուլին՝ «Արարատ», «Արշալույս», «Գործ» և այլն, խմբագրել է «Armenische Zeitschrift» (1901-1904 թթ.) համդեսը, մասնակցել կովկասահայության «Գործ» ամսագրի հիմնադրմանը: 1909-1919 թթ. Բաբելոն գաղթել է փաստաբանությամբ՝ որպես երդվյալ հավատարմատար աշխատելով պետական դատական հիմնարկությունում:

Հ. Մանանդյանը երկար տարիներ զբաղվել է նաև մանկավարժությամբ: 1900-1905 թթ. դասավանդել է Էջմիածնի

### ԲԱՌԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՑ

#### ՊԱՏՄՈՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Մ.թ.ա. 4-րդ դարում (մոտ 387 թ.) հույն փիլիսոփա Պլատոնը Հին Աթենքի զբոսայգիներից մեկում հիմնում է փիլիսոփայական դպրոց: Այգում տեղադրված էր հին հույների դիցաբանական հերոսի՝ Ակադեմոսի արձանը, և զբոսայգին Ակադեմոսի անունով կոչվում էր Ակադեմիա: Պլատոնի դպրոցը եղել է անտիկ գիտության և իդեալիստական փիլիսոփայության խոշորագույն կենտրոն, որտեղ կարևորում էին հատկապես մաթեմատիկան, աստղաբաշխությունը, բնագիտությունը: Պլատոնի դպրոցը պարտեզի անունով կոչվեց Ակադեմիա: Հետագայում, երբ Պլատոնի դպրոցն ու ուսումն ընդհանրացան, Ակադեմիան անցավ հասարակ անվան՝ նշանակելով «գիտական, ուսումնական, գեղարվեստական և այլ կարգի հաստատություն»: Այնքանով որ Պլատոնի ուսմունքը համարվում է խիստ գիտական, նրա դպրոցը դարձավ գիտական մտքի չափանիշ՝ համապատասխանելով արդեն «գիտական» հասկացությանը: Ակադեմիան՝ իբրև գիտական բարձրագույն հաստատություն, տարածվեց եվրոպական գրեթե բոլոր երկրներում:



Ակադեմիան դարձավ գիտության տարբեր ճյուղերի գիտական հետազոտությունները համակարգող մարմին, նրա համակարգի մեջ մտնող ինստիտուտները կոչվեցին ակադեմիական, այդ համակարգի անդամ գիտնականները, որոնք բավարարում էին ակադեմիական մակարդակը, համարվեցին ակադեմիկոսներ, նրանց գիտական համակողմանի հետազոտություններն ու դրանց հրատարակությունները կոչվեցին ակադեմիական, գիտական աներկբա ճշմարտությունները համարվեցին ակադեմիական և այլն: Իր ժամանակին Պլատոնի ուսմունքը, նրա գիտական մեկնաբանությունները, տեսակետներն աներկբա և անվիճելի էին: Սակայն երբ Պլատոնի հեղինակության և գիտական ճշմարտության միջև ընտրություն կատարելու խնդիր էր առաջանում, նախապատվությունը տրվում էր ճշմարտությանը: Այստեղից էլ Արիստոտելի հայտնի բնավոր խոսքը. Amicus Plato, sed magis amica veritas (Պլատոնն ընկերս է, սակայն ճշմարտությունն ավելի են սիրում):

### ՄԱՆԿԱՏՈՒՆԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

Հայտնի է, որ երաժշտական կրթության բարձրագույն հաստատությունը կոչվում է կոնսերվատորիա, սակայն ո՞ւմ մտքով կարող է անցնել, որ կոնսերվատորիա բառը նախապես նշանակել է ... մանկատուն:

Conservo լատիներեն նշանակում է «պահպանել», որից անցել է իտալերենի conservatorio ձևով, նախնական նշանակությամբ՝ «ապաստարան»: XVI դարում Իտալիայում կոնսերվատորիա էին կոչվում մանկատները (անօթևան մանուկների ապաստարանները), որտեղ երեխաներին սովորեցնում էին արհեստներ: Այդ կարգի առաջին կոնսերվատորիան կազմավորվել է Նեապոլում 1537 թ.: XVII դ. սկսած՝ մանկատներում սկսեցին ուսանել երաժշտություն, XVIII դ. արդեն իտալական կոնսերվատորիաները մեծ դեր էին խաղում երաժշտության ու կոմպոզիտորների կրթության գործում: Անհրաժեշտություն առաջացավ ստեղծել հատուկ կրթության երաժշտական հաստատություններ: Այդ հաստատությունները պաշտոնապես անվանվեցին կոնսերվատորիա-ներ՝ ելնելով երաժշտական կրթության առաջին օջախներից՝ մանկատներից: Նմանատիպ առաջին հաստատությունը կազմավորվեց Փարիզում XVIII դ. վերջին: XIX-XX դդ. կոնսերվատորիաներ առաջացան աշխարհի բազմաթիվ երկրներում (Հայաստանում 1921 թ. կազմավորվեց Երևանի երաժշտական ստուդիան, որը 1923-ին վերանվանվեց Կոմիտասի անվ. կոնսերվատորիա):

Conservo (պահպանել) բառից են բաղադրվել կոնսերվատիվ, կոնսերվացում և այլ բառեր: Ռուսերենում conservo փոխառյալ բառով զգալի նորակազմություններ են առաջացել. консервы-պահածոներ, консерватизм-պահպանողականություն և այլն: Անա թե տարբեր լեզուներում ինչ ճյուղավորումներ են տվել միջնադարյան մանկատների սաների երաժշտական ծիրքն ու օժտվածությունը:

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԳԻ «ՂԱՐԱՔԱՂԻ ՈՂՔԸ»



### Խմբագրության կողմից

Հովհաննես Շիրազը «Ղարաքաղի ողբը» բանաստեղծությունը գրել է 1959 թ.: Հեղինակի կենդանության օրոք Հայաստանում այն չի հրատարակվել: Տարբեր աղավաղումներով տպագրվել է Ափյուռքի թերթերում և ժողովածուներում, մեղեդիավորվել է, և երգը հնչել է ամերիկահայ երգիչ Լևոն Գաթրոջյանի կատարմամբ:

Անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

սոր Սամվել Մուրադյանը, ով երկար տարիներ զբաղվում է Հովհաննես Շիրազի անձնական արխիվի նյութերի գիտական ուսումնասիրությամբ, վերջին շրջանում ընթերցող լայն հանրությանն է ներկայացրել «Հովհաննես Շիրազ. Անտիպ երկեր» ժողովածուները (չորս գրքով): Մեծածավալ և շնորհակալ աշխատանք է կատարել վաստակաշատ գիտնականը՝ մոռացությունից փրկելով և հանրայնացնելով ականավոր գրողի ստեղծագործությունները:

«Ղարաքաղի ողբը» բանաստեղծությունը Հայաստանում առաջին անգամ տպագրվել է Ս. Մուրադյանի «Հովհաննես Շիրազ. բանաստեղծը և մարդը» մեծագրության Ա գրքում (2012 թ., էջ 253, 254), այնուհետև նույնությամբ զետեղվել է նրա կազմած «Անտիպ էջերի» առաջին գրքում:

Բանաստեղծությանն առնչվող և Հ. Շիրազին բնութագրող ուշագրավ մի հատված մեջբերենք Սամվել Մուրադյանի արժեքավոր մեծագրությունից.

«1974 թ. ամռան մի օր բանաստեղծի տուն եկավ Հովհ. Շիրազի հավատարիմ գրական ընկերներից մեկը՝ ականավոր գրականագետ-քննադատ Սուրեն Աղաբաբյանը: Նրանց մտերմությունը նկատի ունենալով՝ ՀԿԿ Կենտկոմը

վերջինիս դարձրել էր բարեխոս բանագնաց:

Սիրելի՛ Շիրազ,- ասաց գրականագետը,- Կենտկոմից եմ գալիս և լավ լուր ունեմ հայտնելու:

- Ի՞նչ կըսե՞ես, կենտոմից չի կրնա լավ լուր գա, էն էլ ընձի: Ի՞նչ է այդ լուրը:

- Որոշել եմ խորհրդային գրականությունը գեղարվեստական մեծարժեք ստեղծագործություններով հարստացնելու համար և ծննդյան 60-ամյակի առթիվ քեզ երկրի բարձրագույն պարգևով՝ Լենինի շքանշանով պարգևատրել. Մոսկվան էլ չի առարկում:

- Ընձնե՞ն ինչ կուզեն,- հարցրեց՝ դավադիր մի բան կռահելով, և իմանալու դրա գինը:

- Չնչին մի գիշում: Բոլորը գիտեն, որ այսօր դու ամենաժողովրդական բանաստեղծն ես, և քո ստորագրությամբ ժողովրդի մեջ թռուցիկի պես տարածվող բազմաթիվ բանաստեղծություններ կան, որոնց իրական հեղինակը դու չես: Այսօր ով ուզում է՝ իր գրվածքը տարածվի, տակը ստորագրում է Հովհաննես Շիրազ: Այդպիսի մեկն էլ քո անունով տպվել է Ափյուռքի թերթերում, որի համար թուրքերն ու ադրբեջանցիները մեծ աղմուկ են հանել՝ բողոքներ գրելով

Մոսկվա ...

- Ո՞ր բանաստեղծությունն է, Սուրեն:  
- Է՛ն, էլի, աշուղական չափով գրած. կարծեմ վերնագրել ես «Ղարաքաղի ողբը»:

- Սուրեն, բայց դա հաստատ ես եմ գրել... Ի՞նչըդ հրաժարվիմ: Կըսես՝ թուրքերը բողոքել են Մոսկվա. ես էլ բանաստեղծությունս հենց Մոսկվայի պաշտոնյաների համար եմ գրել, որ իրենց սխալներն ուղղեն, անարդարությունը վերացնեն: Եղ ինչո՞ւ Մոսկվան թուրքերի, ազերիների բողոքները կլսե, էնոնց կարևորություն կուտա, բայց մեզի բանի տեղ չի դնե:

- Թերթերից մեկում գրի՛ր, որ քո անունով շատ բանաստեղծություններ են տպագրվել ու տարածվել, բայց այդ մեկը իբր չես հիշում, որ դու գրած լինես:

- Կերթաս քեզի դրկողներին կըսես՝ Շիրազն ըսավ՝ շնորհակալ եմ ձեր գնահատումից, բայց իմ շքանշանը իմ գրած «Ղարաքաղի ողբը» բանաստեղծությունն է ու մեկելները. դրանք ժողովուրդը ոչ թե ցուցադրաբար իր կրծքեն կկախե, այլ կպահե սրտի և հոգու մեջ...»:

Ընթերցողին ենք ներկայացնում մշտապես արդիական հնչեղություն ունեցող բանաստեղծության՝ Սամվել Մուրադյանի ճշգրտած տարբերակը:

**Ղարաքաղը մորս կանչն է,  
Ինչ է կանչում հուշով տրտում,  
Ղարաքաղը իմ կակաչն է՝  
Կարմիր, բայց սև ունի սրտում...**

Դու էլ, դառած կռվածադիկ, իմ բալիկն ես այ՛ Ղարաքաղ, Մեղրոյ օտար մեղվին տվող իմ ծաղիկն ես այ՛ Ղարաքաղ, Հայաստանից քեզ պոկողը Հայաստանի եղբայրը չէ՛, Երկուսիս մեջ դու էլ մոլոր իմ բալիկն ես, այ՛ Ղարաքաղ:

Քանի՛ բաժան դաժան տարի հայ բերանին ա՛խ ես դառել, Փոխել հայոց անունը Արցախ, օտար Ղարա բաղ ես դառել, Դարձել օտար ջաղացին ջուր, ազգիդ սրտին դաղ ես դառել, Էլ չեմ կարող վիշտս լռել, վա՛յ ինձ ու քեզ, հայ՛ Ղարաքաղ:

Դեռ էն գլխից հայոց հող ես, աստվածընձա՛ իմ լեռնածոր, Քո դրախտից ձեռ քաշող հայն՝ հայոց վայն է, ո՛վ մեղրածոր, Թե եղբայր եմ՝ ինչո՞ւ եմ քեզ մեր մեջ դարձրել կռվախնձոր, Աստվածընձան ինչպե՛ս թողնես սատանային փայ՛, Ղարաքաղ:

Կթառամես անտիրական՝ այգեպանիդ ձեռքից գատված, Հիքրաստի ես խաբված լսում՝ Կոմիտասիդ երգից գատված, Քեզ չեմ թողնի իշխան մնաս՝ մայր Սևանիդ գրկից գատված, Քեզ կուլ կտան մուղամները, գառդ կանեն գա՛յ, Ղարաքաղ:

Դու՛ չես ջոկվել, քեզ խլել են, որ մոռանաս երգերն հայոց, Ձորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց, Ա՛խ, ե՞րբ պիտի լեռներիդ պես վե՛ր բռունցքվեն ձեռներն հայոց, Որ չթողնեն հայոց արծիվն օտար ծովին ճայ, Ղարաքաղ:

Բա՛ց աչքերդ, անդունդը տես, ե՛կ, մի՛ ծուլվիր օտար զարմին, Իմ տարագիր հայոց կռունկ, ե՛կ, խառնվիր քո երամին, Մեզ չի՛ կարող մահն էլ գատել, մի հոգի ենք ու մի մարմին, Դու իմ Կարսի, իմ Սասունի, իմ Մասիսի թայ՛, Ղարաքաղ:

Մենակ դու չես որ դիմանամ. յոթը դրախտ ունեմ խլված, Վանա ծովը, Կարսն ու Վանը, Սիփան սարը, Անին փլված, Հայկ Նահապետ Մասիսի հետ դեռ բանտում եմ՝ ծունկը ծալված, - Տարտարոս է Տարոնը դեռ, ո՞ւր ես, Ավարայր Ղարաքաղ...:

Ասում եմ, թե շեն է կյանքդ. առանց ազգի շենն ի՞նչ անեն, Երբ չի զնգում հայոց լեզվով՝ գինով թասի ձեռն ի՞նչ անեն, Հյուսիսն ինքն էլ սառցալուռ է, էլ իմ անգոր քենն ի՞նչ անեն.- Գինիդ օտար թասն է խնում, արցունքդ՝ հայ՛ը, հայ՛ Ղարաքաղ:

Բարեկամը որ քեզ խլեց, էլ թշնամին բան կտա՞ ետ, Թե լուռ մնա քար աշխարհը՝ չարը Կարս ու Վան կտա՞ ետ, Ի՞նչ դուռ բախեն, որ ծիծաղեն, ասեմ՝ Նախիջևան կտա ետ, Մոլորվել են ես էլ քեզ պես, պի՛ղծ է աշխարհն, այ՛ Ղարաքաղ:

Քանի իմ հողն ինձ չեք տվել՝ ձեզ ելուզակ պիտի ասեն, Ավարայրի Վարդան դառած՝ ես ձեզ Վասակ պիտի ասեն, Երբ իմ բուրդ հողերն ինձ տաք՝ ձեզ հրեշտակ պիտի ասեն, Պիտի պաշտեն ողջ ազգերիդ, երբ որ չասեն վա՛յ Ղարաքաղ:

Դու էլ հայոց գրկից խլված իմ բալիկն ես, ի՛ն հեռավոր, Պոռնկաշուրթ բախտի ոտքին խաղալիք ես, ի՛ն լեռնածոր. Բայց ինչքան էլ բալիկիս պես մեր մեջ մնաս կռվախնձոր՝ Շիրազն ասաց՝ աշխարհն անցնի՛ հայ գալիք ես, հայ՛ Ղարաքաղ:



ԳԻՏԱԿԱՆՐԱՄԱՏՆԵԼԻ ԽԱՆՁԵՍ
ԻՏՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Այս խորհուրդները տալիս է Ուղեղի առողջության հանրահանր կենտրոնի խորհրդատու, պրոֆեսոր Ջեյմս Գուդֆինն անգլիական «New Scientist» հանդեսում:

Պահպանել ձեր աղիքների առողջությունը: Վերջերս հաստատվել է, որ սերոտոնինի մեյրոնների միջև ազդանշանների փոխանցումն ապահովող, կենտրոնական նյարդային համակարգի և մարտդակաճեղքի գործունեությունը կարգավորող, ինչպես նաև տրամադրությունը կայունացնող հորմոնի 90 %-ն արտադրվում է աղիքներում, և ընդամենը 10 %-ը՝ ուղեղում: Աղիքներն առողջ պահելու համար կերեք շատ բանջարեղեն և միրգ:

Բազմաթիվ փորձագետների կարծիքով պարբերաբար կարճատև քաղցածությունը խթանում է ուղեղի մեյրոտրոֆիկ գործունի՝ նոր մեյրոնների և դրանց կապերի առաջացմանը նպաստող, դրանց գոյատևմանն օգնող սպիտակուցի արտադրությունը, որը նաև անհրաժեշտ է երկարաժամկետ հիշողության համար: Այդ սպիտակուցն առկա է ուղեղի՝ ուսունմառության և հիշողության համար պատասխանատու հատվածներում:

Շատ կարևոր է սննդի բազմազանությունը: Մեր օրերում մարդկությունը սննդի 75 %-ը ստանում է բույսերի ընդամենը 12 և կենդանիների 5 տեսակներից, որը չափազանց քիչ է: Ժամանակակից մարդու սննդում օժեգա-6 և օժեգա-3 ճարպաթթուների հարաբերակցությունը 1:20 է, մինչդեռ այն պետք է մոտենա 1:4 մակարդակին, իսկ դրա համար անհրաժեշտ է ուտել յուղոտ ձուկ, սպանախ, կտավատի սերմեր կամ կտավատի յուղ:

Չմոռանաք շարժվել: Շարժումը, ֆիզիկական ակտիվությունը դանդաղեցնում են ուղեղի ծերացումը և անզամ կարող են այն կանխել: Այն վայրերում, որտեղ կյանքի տևողությունը միջինից բարձր է՝ ծերունական տկարությունը և հիշողության կորուստը 75 %-ով ավելի հազվադեպ են, քան արևմտյան աշխարհում: Սա պայմանավորված է տեղացիների ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակով: Կյանքի այսպիսի տևողության համար հարկավոր է օրական թեկուզ կես ժամ հատկացնել արագ քայլելուն կամ հեծանիվ վարելուն: Առնվազն ժամը մեկ բարձրացեք բազկաթռոցից կամ բազմոցից և 10 րոպե քայլեք սենյակում: Ապացուցվել է, որ Ալցհայ-

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՈՒԹ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՐ ՈՒՂԵՂԻՄ\*

մերի հիվանդության դեպքերի 17 %-ը կապված է ֆիզիկական ակտիվության անբավարար մակարդակի հետ:

Պակաս կարևոր չէ մտավոր ակտիվությունը: Ուղեղն աշխատանքային վիճակում կարելի է պահել տարբեր եղանակներով՝ յուրացնելով երաժշտական որևէ գործիք, յոգա, նոր պար, նոր թղթախաղ, սովորել ձեռնածություն անել... Ընդհանրապես ցանկացած նոր հմտություն կանխում է հին մեյրոնների մահացումը և նպաստում է նորերի հայտնվելուն, ավելացնում է ուղեղի ճկունությունը և նոր պայմաններին հարմարվելու կարողությունը:

Իսպանացի վիճակագիրները հայտնաբերել են, որ միայնակ մարդկանց մահացությունը 1.5 անգամ ավելի բարձր է, ընդ որում ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում:

Մեմությունը, մեկուսացումը մեծացնում են համակարգային բորբոքումների, հիպերտոնիայի, շաքարախտի, սիրտ-անոթային հիվանդությունների հավանակա- նությունը:

Ժամանակակից մարդու լրջագույն խնդիրներից է անքնությունը: Խորհուրդ է տրվում քնել օրական առնվազն 7 ժամ: Քրոնիկ քնատությունը վատթարացնում է հիշողությունը, լուծումներ տալու ունակությունը, ամորադառնում է ուսուցանելու կարողության, ուշադրության և տրամադրության վրա: Կա կարծիք, թե ծերունիները կարող են ավելի քիչ քնել: Դա այդպես չէ: 60-ից բարձր տարիքի մարդկանց համար նույնպես անհրաժեշտ է օրական 7-9-ժամյա քուն, անզամ եթե այդ չափաքանակը կուտակվում է օրվա ընթացքում:

Գուդֆինի վերջին խորհուրդը կարող է տարօրինակ թվալ, բայց հողվածի հեղինակը պնդում է, որ ավելի քան 20 հետազոտություն ապացուցել են մաստակի օգուտն ուղեղի աշխատանքի համար: Այս երևույթի մեխանիզմը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ ժամելն ավելացնում է արյան հոսքը դեպի ծնոտի մկաններ և միաժամանակ դեպի թե՛ ամբողջ գլուխը, թե՛ ուղեղը: Ձեր կենսակերպը և կենցաղային պայմանները թույլ չե՛ն տալիս կատարել բոլոր ութ խորհուրդները: Հետևե՛ք թեկուզ մի քանիսին, և արդյունքը չի ուշանա:

\*«Գիտության աշխարհում», 2023, N 2 (տպագրվում է որոշ կրճատումներով):

«Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթ

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթ:

Մրցույթի հիմնական նպատակներն են՝ աջակցել երիտասարդ գիտնականների մասնագիտական որակավորման բարձրացմանը, երիտասարդ գիտնականների համար հասանելի դարձնել արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորությունը, նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը: Մրցույթի առավելագույն բյուջեն մինչև 4 միլիոն դրամ: Դիմելու վերջնաժամկետն է 2023 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ:

Մրցույթն իրականացվում է երեք ենթածրագրերով՝ - արտասահմանյան գիտական կենտրոններում երիտասարդ գիտնականների վերապատրաստում, - արտասահմանյան գիտական կենտրոններում գիտական ստորաբաժանումների երիտասարդ ղեկավարների (բաժնի, լաբորատորիայի կամ գիտական խմբի ղեկավար) մասնագիտական վերապատրաստում և հմտությունների կատարելագործում, - արտասահմանյան կազմակերպություններում ժամանակակից սարքեր-սարքավորումների վրա աշխատելու հմտությունների կատարելագործում:

Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներում և մասնագիտություններում:

Վերապատրաստման տևողությունը կարող է լինել 30-ից մինչև 90 օր առաջին և երկրորդ ենթածրագրերի դեպքում, 10-ից մինչև 90 օր՝ երրորդ ենթածրագրի դեպքում: Վերապատրաստման մեկնարկի օրը կարող է լինել 2024 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 1-ը ներառյալ:

Ընդունող կազմակերպություն կարող է հանդիսանալ արտերկրի գիտական կազմակերպություն կամ հետազոտական բաղադրիչ ունեցող ձեռնարկություն: Հայտատու ընդունող կազմակերպությունում պետք է ունենա գիտական աստիճան կամ համարժեք որակավորում ունեցող հրավիրող/մեթոր:

Հայտատուում պետք է լինի ՀՀ քաղաքացի կամ ՀՀ-ում մշտապես բնակվող և գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ գիտնական: Մրցույթին կարող են դիմել մինչև 36 տարեկանը չլրացած հետազոտողները: Երեխաներ ունեցող կին երիտասարդ գիտնականների պարագայում տարիքային շեմը ենթակա է վերանայման՝ յուրաքանչյուր երեխայի համար ավելացնելով լրացուցիչ մեկ տարի, իսկ ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած տղամարդկանց համար՝ 2 տարի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատողի թափուր տեղի համար:

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ ա) դիմում,

- բ) լուսանկար,
գ) քաղվածք աշխատանքային գրքուկից,
դ) ինքնակենսագրություն,
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
է) կարգերի հաշվառման անձնական թերթիկ,
ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:
Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրատարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Գ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.10.2023 թ.:
"ԴՄԻՏՅՈՒՄ" ("Hayka") gazeta HAH PA

ԿՄԵՆԻՑ ԿՄԵՆԸ...

Աշխարհի ամենաբարձր ջրվեժը

Աշխարհի ամենաբարձր ջրվեժն Անխելն է: Գտնվում է Վենեսուելայում՝ Կանայմայի ազգային պարկում: Ազատ անկումով ջրվեժը գահավիժում է Վենեսուելայի ամենաբարձր կետից՝ Աուլյանտեպույա ժայռի բարձունքից, որը թարգմանաբար նշանակում է «Աստանայի լեռ»:



Ջրվեժի ընդհանուր բարձրությունը 979 մ է, ազատ անկումը՝ 807 մ, լայնությունը՝ 107 մ, ծախսը՝ 300 մ³/վ: Ջրվեժի՝ չափազանց մեծ բարձրությունից վայր թափվող ջրի կաթիլները մինչև գետնին հասնելը գոլորշիանում ու մառախուղ են դառնում:

Անխելը հայտնաբերել է ամերիկացի օդաչու Ջեյմս Եյնզելը 1935 թ. (նրա պատվին էլ ջրվեժը կոչվել է Անխել):

Ամենամեծ ապակե կամուրջը

Աշխարհի ամենաերկար և ամենաբարձր ապակե կամուրջը գտնվում է Չինաստանի Հունան շրջանում՝ Չժանցայագե ազգային պարկում:

Կամրջի երկարությունը 430 մետր է, լայնությունը՝ 6 մետր: 300 մետր բարձրության վրա գտնվող կամուրջը միացնում է երկու ժայռերը:

Կամրջի ամրությունը ստուգելու համար մինչև դրա բացումը ապակե կառույցի վրայով անցել է 2 տոննա քաշով բեռնատար:



Ամենաթանկարժեք տունը

Շվեյցարիայի Ցուգի լճի ափին է գտնվում \$12.2 միլիարդ դոլար աստղաբաշխական արժողությամբ աշխարհի ամենաթանկարժեք տունը: Վերջինիս շինարարությունն ավարտվել է 2012 թվականին: Առանձնատունը զարդարված է 200 կգ մաքուր ոսկով և պլատինով, հատակը պատրաստված է երկնաքարից, որի մեջ տե-

ղադրված են նաև հնագույն տիրանոգավրի ոսկորների ներդիրներ:

Ընդհանուր առմամբ աշխարհի ամենաթանկարժեք տան բնակելի մակերեսը 752 քառակուսի մետր է: Գինու մառանը զբաղեցնում է 245 քառ. մետր տարածք: Շինության ճշգրիտ վայրը խիստ գաղտնի է:



Ամենամեծ գլոբուսը



Նորարար քարտեզագրող «DeLorme» ընկերությունը, որոշելով ցուցադրել իր հնարավորությունները, ստեղծել է մեր կապուլտ մոլորակի եռաչափ պատվող մոդելը:

Գլոբուսի կմախքը պատրաստված է ալյումինե թեթև խողովակներից, վերին մակերևույթը՝ հատուկ սալերից:

Դիրքը ղեկավարվում է համակարգչով: 12,6մ տրամագծով մոդելն աշխարհի ամենամեծ գլոբուսն է:

Ամենամեծ լողավազանը

Չիլիի «Սան Ալֆոնսո Դել Մար» առողջարանում է գտնվում աշխարհի ամենամեծ լողավազանը: Այս հսկա լողավազանի բացումն արվել է 2006 թվականի դեկտեմբերին: Շինարարությունը տևել է շուրջ հինգ տարի, որի ընթացքում ծախսվել է ավելի քան 1 միլիարդ դոլար:



Լողավազանի երկարությունը 1 կմ է, ընդհանուր մակերեսը՝ 8 հեկտար: Ամբողջ տարածքը նոտավորապես 6000 տվորակա լողավազանի չափ է:

Սա դեռ ամենը չէ, ինչով կարող է հպարտանալ «համաշխարհային ռեկորդակիրը»: Լողավազանի երկրորդ ռեկորդը խորությունն է: Ամենախոր կետում այն մոտ 40 մ է: Լողավազանը պահելու համար տարեկան ծախսվում է ավելի քան 2 միլիոն դոլար: